Ուսումնական նախագծի պլան

Դասարան՝ **8**-րդ Ա

Ղեկավար՝ Զոյա Գևորգյան

Առարկա (ներ)՝ անգլերեն

Նախագծի սկիզբ	1.	Նախագծի անունը (անվանումը)	**<<**Գողացված ապագա,աշակերտուհու պայքարը հանուն կրթության**>>**
	2.	Հիմնահարցը (հիմնախնդիրը)	• Ի՞նչ է արդարությունը, և արդյոք այն միշտ նույնն է բոլորի համար: • Ո՞ր իրավունքներն են կարևոր ամեն օր մեր կյանքում, և ինչո՞ւ: • Ի՞նչ են նշանակում «իրավունքներ» և «պարտականություններ» աշակերտի համար: • Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել մեր իրավունքները՝ հարգելով նաև ուրիշների իրավունքները: • Արդյո՞ք դպրոցում մարդու իրավունքները նույնքան կարևոր են, որքան հասարակության մեջ:
	3.	Ուսումնական տարին, կիսամյակը	2-րդ
	4.	Տևողությունը	6 շաբաթ
	5.	Ժամաքանակը	6 ժամ
	6.	Նպատակը (ները)	Նախագծի նպատակն է աշակերտներին ծանոթացնել մարդու իրավունքների հիմնական սկզբունքներին՝ դատավարության մոդելավորման միջոցով: Աշակերտները կզարգացնեն քննադատական մտածողություն, փաստարկված խոսք, թիմային աշխատանք և ստեղծագործական հմտություններ:

	7.	Ուղղորդող հարցեր	• Ի՞նչ է նշանակում ունենալ իրավունք, և արդյո՞ք դպրոցում մեր իրավունքները նույնքան կարևոր են, որքան հասարակության մեջ: • Ի՞նչ է արդարությունը, և ինչպե՞ս կարող ենք հասկանալ, արդյոք մարդու իրավունքը խախտվել է: • Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել մեր իրավունքները՝ հարգելով նաև ուրիշների իրավունքները:

	8.	Ուսումնական նախագծի վերջնարդյունքները	Ուսումնական նախագծի ավարտին աշակերտները ներկայանում են դատավարության տեսահոլովակ, որտեղ ցուցադրում են ձեռք բերած իրավական գիտելիքները, բանավիճելու հմտություններն ու դերային խաղերի միջոցով ներկայացրած դատական գործընթացը:
	9.	Աշխատանքային խմբեր	Սցենարի մշակման խումբ
			Իրավաբանական խումբ
			Տեխնիկական և ներկայանող խումբ
	10.	Առաջադրանքներն ըստ խմբերի	Ստեղծում են դատավարության դեպքը, գրում դերակատարների խոսքերը՝ կապելով այն առօրյա իրադարձություններից: Հորինում են դեպք՝ մարդու իրավունքների խախտմամբ, մշակում են բոլոր կերպարների խոսքերն ու ելույթները:
			Ուսումնասիրում են մարդու իրավունքները, աշխատում են որպես «փաստաբաններ», «դատավորներ», «վկաներ»: Մշակում են կողմերի փաստարկները և հակափաստարկները:
			Կազմակերպում են դատավարության ներկայանումը և տեսահոլովակի պատրաստումը: Ներկայանում են հեռախոսով, կատարում են տեսանյութի մոնտաժ և տեխնիկական կարգավորում:

	11.	Ժամանակացույց	1-ին շաբաթ	Մարդու իրավունքների և դատավարության հիմունքները ● Դաս՝ մարդու իրավունքների մասին (հիմնական սկզբունքներ, իրավունքների խախտումներ) ● Քննարկում՝ արդար դատավարության կարևորությունը ● Դատական համակարգի կառուցվածքի ուսումնասիրություն ● Դերերի բաշխում (դատավոր, փաստաբաններ, մեղադրյալ, վկաներ և այլն)
			2-րդ շաբաթ	Դատական գործի մշակումը ● Սցենարի նախնական մշակում ● Աշակերտների կողմից դեպքի մանրամասների քննարկում ● Դատարանի դերի և դատական էթիկայի ուսուցանում ● Առաջին փորձերը՝ խոսքի ձևակերպման վրա ուշադրություն դարձնելով
			3–րդ շաբաթ	Փաստարկների զարգացում և դատական ելույթներ ● Փաստաբանների, մեղադրյալի, վկաների և դատավորի խոսքերի ձևակերպում ● Փաստարկների և հակափաստարկների մշակման տեխնիկաներ ● Թիմային քննարկումներ և ելույթների փորձեր
			4-րդ շաբաթ.	Դատավարության փորձնական բեմադրում ● Առաջին լիարժեք դատավարության փորձ ● Դատական նիստի ձայնագրման փորձեր ● Խոսքի, մարմնի լեզվի և դատական ընթացակարգերի դիտարկում
			5-րդ շաբաթ	Տեսահոլովակի նկարահանում ● Տեսահոլովակի բեմադրություն ● Տեսախցիկի և ձայնագրման տեխնիկայի ուսուցում ● Դատական նիստի վերջնական նկարահանում (անհրաժեշտության դեպքում՝ մի քանի տարբերակով)

			6-րդ շաբաթ Տեսահոլովակի խմբագրում և ներկայացում ● Տեսահոլովակի մոնտաժ ● Մարդու իրավունքների վերաբերյալ քննարկում և վերլուծություն ● Պաշտոնական ցուցադրություն (դպրոցում, ուսուցիչների և ծնողների համար) ● Ուսումնական նախագծի և արդյունքների ամփոփում:

Նախագիծ	12.	Ուսումնական նախագծի նկարագիրը	
			« Գողացված ապագա,աշակերտուհու պայքարը հանուն կրթության » նախագիծը նպատակ ունի աշակերտներին ծանոթացնել մարդու իրավունքների հիմնական սկզբունքներին՝ ստեղծագործական և համագործակցային ուսուցման միջոցով: Նախագծի ընթացքում սովորողները ուսումնասիրում են մարդու իրավունքները, տարբեր իրավիճակներում դրանց կիրառումը և խախտումները: Նրանք աշխատում են խմբերով՝ ստեղծելով դատավարության սցենար, բաշխելով դերեր (դատավոր, փաստաբաններ, մեղադրյալ, վկաներ և այլն), պատրաստելով ելույթներ և փաստարկներ: Նախագիծը ներառում է փորձեր, դերախաղեր, բանավեճեր և վերջնական տեսահոլովակի նկարահանում, որտեղ աշակերտները բեմադրում են ամբողջ դատական գործընթացը՝ սկսած գործի ներկայացումից մինչև դատավճիռ: Աշակերտները զարգացնում են քննադատական մտածողություն, իրավագիտակցություն, թիմային աշխատանք և հանրային խոսքի հմտություններ: Որպես նախագծի վերջնարդյունք աշակերտները ներկայացնում են պատրաստված տեսահոլովակը՝ որպես ստեղծագործական և ուսումնարար արդյունք:

	13.	Ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի /պրոդուկտի/ ներկայացման տեսակը և հետազոտության աղբյուրները:	Նախագծի ավարտին աշակերտները կներկայացնեն բեմադրված դատավարության տեսահոլովակ, որը կնկարահանվի և կմոնտաժվի որպես ուսուցողական և ստեղծագործական արտադրանք: Աշակերտներն իրենց նախագծային աշխատանքում օգտվում են հետևյալ աղբյուրներից՝ • «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (պարզեցված տարբերակ՝ տարիքին համապատասխան) Թվային և առցանց աղբյուրներ՝ • UNICEF, Amnesty International-ի կրթական նյութեր • YouTube-ում ներկայացված կրթական տեսանյութեր մարդու իրավունքների և դատական գործընթացների մասին Բանավոր աղբյուրներ՝ • Դասավանդողի ներկայացրած նյութերը և բացատրությունները
	14.	Գնահատում	1. Նախագծին մասնակցություն (4 միավոր) 2. Ներկայացման հմտություններ (2 միավոր) 3. Գիտելիքների ստուգում (4 միավոր):
	15.	Տվյալ առակայի/ների/ թեմայից /ներից/ ձեռք բերված վերջնարդյունքներ	Նախագծի արդյունքում աշակերտները ծանոթանում են մարդու հիմնական իրավունքներին և սովորում դրանք կիրառել առօրյա իրավիճակներում: Նրանք կարողանում են տարբերել իրավունքի խախտումը և արտահայտել իրենց կարծիքը պարզ ու հարգալից ձևով: Սովորողները համագործակցում են թիմով, զարգացնում են վստահ խոսք, ստեղծում են դատավարության սցենար և ներկայացնում այն տեսահոլովակի ձևով: